| | |
|---|---|
| **Կազմակերպության անվանում և կազմակերպաիրավական ձև** | «Անտիֆեյք.ամ» լրատվական |
| **Էլ. փոստի հասցե** | antifakeam@gmail.com |
| **Հեռախոսահամար** | 91572718 |
| **Ծանուցման եղանակ** | Էլ.փոստի միջոցով |

# Առցանց հարցում

Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին
(Հասցե՝ ք. Վանաձոր 2001, Հայքի հրապարակ,
էլ. փոստ՝ lori@mta.gov.am,
Հեռ.՝ (0322) 4-61-92)

«Անտիֆեյք.ամ» կայքի լրագրող
Սոնա Ամիրյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,
Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալի մասին.
1. Ընդհանուր որքա՞ն պարգևավճար են ստացել Լոռու մարզպետարանի աշխատակիցները 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում (տրամադրել 2020թ. առաջին եռամսյակի համար պարգևավճարի ընդհանուր չափը, ինչպես նաև ամսական պարգևատրումների ընդհանուր չափը):
2. 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Լոռու մարզպետը քանի՞ անգամ և որքա՞ն է պարգևատրվել (տրամադրել 2020թ. առաջին եռամսյակի համար պարգևավճարի ընդհանուր չափը, ինչպես նաև ամսական պարգևատրումների ընդհանուր չափը առանձին-առանձին):
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:
(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):
Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:
Կանխավ շնորհակալ եմ՝

---

«Անտիֆեյք.ամ» կայքի լրագրող՝ Ս. Ամիրյան